ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության

ինստիտուտի տնօրեն

Ա.Ա.Բաբոխյան

31.10. 2024

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անրիետա Արաիկի Կարապետյանի՝ «Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը վերաբերում է սոցիոլոգիայում և մի շարք այլ գիտություններում խիստ արդիական թեմաներից մեկին՝ վիրտուալ հաղորդակցություններին: Վիրտուալ հարթակներն այսօր ակտիվորեն ուսումնասիրվում են՝ որպես իրական հաղորդակցություններին գոնե մասամբ փոխարինողներ, օրինակ՝ ապրանքների և ծառայությունների գնման, կրթական գործընթացների իրականացման և այլ առումներով: Այսօրվա մարդու հաղորդակցական բնույթն ու վիրտուալ ընկերներ ունենալու, վիրտուալ հաղորդակցում իրականացնելու առանձնահատկությունները կարող են պայմանավորել և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ կրթական գործընթացների ներկան ու ապագան, ուստի և հետազոտության կարևոր հարցերից են:

Աշխատանքում մեկնաբանվել են հաղորդակցության վերաբերյալ այն հիմնական տեսությունները, մոդելները, բաղադրիչները, գործառույթներն ու խոչընդոտները, որոնց դուրսբերումը թույլ է տվել ստանալ ատենախոսական հետազոտության համար անհրաժեշտ մեթոդաբանական հիմք և հասկացութային ապարատ: Հետազոտության իրականացման համար կիրառվել են ընդհանուր և հատուկ գիտական մեթոդներ: Հետազոտության գործիքը՝ առցանց կառուցված և տարածված հարցաթերթը, ապահովել է հարցման իրականացում հենց վիրտուալ սոցիալական ցանցերում:

Ատենախոսության կարևոր տեսական և հատկապես կիրառական արդյունքներից է հայ օգտատերերի հաղորդակցական վարքի բնութագրումը, սոցիալական ցանցերում կիրառվող ռազմավարությունները՝ սկսած սոցիալական ցանցերի նախընտրելիությունից և վերջացրած տարբեր նպատակների իրականացմամբ: Ատենախոսը բացատրում է, թե ինչու է Հայաստանում տարածում ստացել այս կամ այն վիրտուալ սոցիալական ցանցը, որքանով են տարածված տեղեկատվություն ստանալու, ընկերներ փնտրելու, գործնական հարաբերություններ ձևավորելու և իրականացնելու, ժամանցային հաղորդակցում ունենալու նպատակները հայ օգտատերերի շրջանում: Հայ օգտատերերի վիրտուալ հաղորդակցական առանձնահատկությունները դուրս են բերվում ըստ օգտատերերի սեռի, տարիքային խմբերի, կրթական մակարդակի, ինչը տալիս է առավել մանրամասն պատկերացում, թե ինչպիսին է հայ օգտատերը վիրտուալ սոցիալական ցանցերում: Մեթոդաբանության առումով կիրառվել են քանակական հարցման մեխանիզմներ՝ դուրս բերելու հենց հայաստանցիների պատասխանները:

Հատկանշական է նաև հայ օգտատերերի կողմից վիրտուալ սոցիալական ցանցերում կեղծ էջերի բացման պատճառաբանման ու նպատակների դուրսբերման արդյունքը, այդ թվում՝ մեծամասնական կարծիքներին հակադրվելու, մեծամասնության ճնշումից խուսափելու, հակառակ սեռի հետ ծանոթանալիս գաղտնի մնալու և այլ նպատակներից ելնելով:

Ելնելով հայ օգտատերերի վիրտուալ հաղորդակցական ռազմավարություններից՝ ատենախոսության հեղինակը տիպաբանում է օգտատերերին, նաև առանձնացնում նոր տիպեր, որոնք այլ հասարակություններում

իրականացված հետազոտությունների ժամանակ չէին բացահայտվել և կարող են կողմնորոշիչ լինել այլ, այդ թվում՝ համեմատական ուսումնասիրություններում:

Հեղինակը կարողացել է իրատեսական, բազմակողմանի և նորարար հետազոտություն իրականացնել: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ոչ միայն հաղորդակցության տեսությունների դասավանդման և զարգացման ոլորտում, այլ նաև վիրտուալ տիրույթում օգտատերերին ուղղված քաղաքական, գովազդային, մարքեթինգային, կրթական, տեղեկատվական և այլ գործընթացների ծրագրավորման և իրականացման նպատակներով: Հայ օգտատերերի վիրտուալ հաղորդակցական նախընտրությունների, վարքի, առանձնահատկությունների դուրսբերումը թույլ է տալիս այդ հաղորդակցությունների վրա ազդել, դրանով՝ ազդել մարդկանց մտածողության և վարքի վրա:

Աշխատանքի վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները՝

1.Հետաքրքիր կլիներ տեսնել հետազոտության արդյունքների համեմատություններ հարևան երկրների հետ՝ հաշվի առնելով, որ վերջիններիս օգտատերերը ևս նախընտրում են հետազոտության համար ընտրված վիրտուալ սոցիալական ցանցերը:

2. Տեսական հատվածում հաղորդակցության մոդելների տարանջատման հիմքը կարող է շփոթեցնող հանգամանք հանդիսանալ՝ պայմանավորված հաղորդակցության ցանցային մոդելների եւ առցանց հաղորդակցության մոդելների նույնականացմամբ:

3.Աշխատանքը որոշ չափով կշահեր, եթե հեղինակն ավելի շատ օգտվեր ռուսական գրականությունից:

Նշված դիտողությունները սակայն չեն նսեմացնում ատենախոսության գիտական նշանակությունը:

Ատենախոսությունն իր կառուցվածքով, ծավալով, տեսական և կիրառական արդյունքներով համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին: Հեղինակն իր հետազոտության արդյունքները հրատարակել է մի շարք գիտական հոդվածներում՝ Հայաստանում և արտերկրում:

Այսպիսով՝ ատենախոս Անրիետա Արաիկի Կարապետյանի՝ «Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում» ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ ատենախոսությունը համապատասխանում է ներկայացվող պահանջներին, իսկ

հեղինակը կարող է հայցել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, պ.գ. դ.
Ռ.Ս.Կարապետյան

Պ.գ. դ. Ռ.Ս.Կարապետյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտքարտուղար Տ. Դալալյան

31.10.2024